Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, Գ.Խ. Նախազգահ

_______ Ն. Խ. Մարիբեկյան

«23» 12 ____________ 2017թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Գիտական մասը «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ Համալսարան) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ԱԲՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնակարգի դրույթներով:

1.2. Գիտական մասի աշխատանքները ղեկավարում է գիտական մասի վարիչը, որին նշանակում և աշխատանքից ազատում է Համալսարանի ռեկտորը:

1.3. Գիտական մասի վարիչը միաժամանակ հանդիսանում է Համալսարանի գիտական խորհրդի քարտուղար:

2.ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1.Գիտական մասի հիմնական խնդիրներն են՝

- Համալսարանի Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ միջազգային համագործակցության, գիտության, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում,
- Համալսարանը միջազգային գիտակրթական տարածք ինտեգրման գործընթացների կազմակերպման նպատակով առաջատար բուհերի հետ առկա համագործակցության շրջանակներում համատեղ հետազոտական ծրագրերի նախագծում և իրականացում,
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին տարբեր գիտական ծրագրերում ներգրավելու աշխատանքների, այդ թվում՝ փոխանակման ծրագրերի կազմակերպում,

- գիտական միջոցառումների, այդ թվում՝ Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ միջազգային սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների, կլոր սեղանների, կոնֆերանսների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպում:

2.2. **Գիտական մասի գործառույթները՝**

- արտասահմանյան ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի բանակցային գործընթացների կազմակերպում,
- Համալսարանի միջազգային գործունեության համակարգումը, միջազգային գիտական հետազոտական ծրագրերի իրականացման կազմակերպումը և կատարման վերահսկողությունը,
- Համալսարանի և օտարերկրյա բուհերի, գիտական հիմնարկների, գերատեսչությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև պայմանագրերի (համաձայնագրերի, ինչպես նաև համագործակցության ծրագրերի, պլանների) նախապատրաստման կազմակերպումը և կնքված պայմանագրերի պահանջների, պարտավորությունների կատարման վերահսկողության իրականացնումը իր իրավասությունների շրջանակներում,
- պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև գիտական ստորաբաժանումների (ամբիոններ, լաբորատորիաներ) գործունեության համակարգում,
- նորարարական ծրագրերի իրականացման և Համալսարանի կողմից ստեղծված գիտահետազոտական արդյունքների պատենտավորման ու առևտրայնացման աջակցում,
- գիտության զարգացման այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների (դրամաշնորհներ, գործարար աշխարհի հովանավորություն, անհատների նվիրատվություններ) ձեռքբերման միջոցառումների իրականացում,
- գիտահետազոտական արդյունքների լուսաբանման կազմակերպում,
- Գիտահետազոտական աշխատանքների թեմաների հաստատման ներկայացում Համալսարանի գիտական խորհրդին:

2.3. **Գիտական մասի վարիչի հիմնական գործառույթներն են՝**

- համալսարանում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը,
- կրթական ծրագրերում և գործնական բժշկության մեջ գիտության նվաճումների ներդրման իրականացումը,
- գիտահետազոտական աշխատանքների տարեկան պլանների նախագծերի կազմման աշխատանքների ղեկավարումը և դրանց կատարման հսկողությունը,
- համալսարանի գիտական և գիտահետազոտական գործունեության արդյունքների հաշվետվության պատրաստումը,

- համալսարանի և գործընկեր բժշկական կենտրոնների և կլինիկական բազաների գիտական գործունեության կոորդինացումը,
- ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը,
- ուսանողների և երիտասարդ մասնագետների գիտական կոնֆերանսների կազմակերպումը և անցկացումը,
- գիտական նստաշրջանների պարբերաբար կազմակերպումը,
- նստաշրջանների և կոնֆերանսների նյութերի պատրաստումը և հրատարակումը,
- միջբուհական գիտական կապերի ընդլայնումը,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և ատեստացիայի անցկացումը:

3.ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

3.1. Գիտական կենտրոնը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: